

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2022 թվականի
փետրվարի 25-ին կայացած գիտական Խորհրդի N8 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 30-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Երկրաֆիզիկայի, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնների միավորման հարցի քննարկում /զեկ.դեկան Մ.Ա.Գրիգորյան/
2. 2021/2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների լուծարքային շրջանի արդյունքների քննարկում: /զեկ.փոխդեկան Ս.Ս.Քելյան/
3. Ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի ներդրման նպատակահարմարությունն ու արդյունավետությունը: /զեկ.փոխդեկան Ս.Ս.Քելյան/
4. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ /զեկ.ամբ.վարիչ Վ.Վ.Գրիգորյան/
5. Ընթացիկ հարցեր

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. ԼՄԵՑԻՆ. Դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը Երկրաֆիզիկայի, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնների միավորման հարցի վերաբերյալ: Նա նշեց, որ նշված ամբիոնները մասնագետ թողարկող ամբիոններ են և դրանց միավորումը արդարացված չէ: «Ամբիոնների միավորման հարցը վերջին տարիներին հաճախ է քննարկվել, սակայն կարողացել ենք հիմնավորել միավորման ոչ արդյունավետ և ճիշտ լինելը:

Միավորման քննարկվող հարցը չէր բարձրանա և այսքան սուր չէր դրվի եթե չլիներ ամբիոնների փոքրաթիվ լինելու խնդիրը: Հարցը քննարկվել է ամբիոնների վարիչների ներկայությամբ և դեկանատում՝ բոլորս միաձայն ենք եղել, որ միավորումը արդարացված չէ, սակայն դրանից խուսափել հնարավոր չէ»,- ասաց դեկան Մ.Գրիգորյանը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Երկրաֆիզիկայի ամբիոնը և Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնը միավորել և նորաստեղծ ամբիոնն անվանել Երկրաֆիզիկայի, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քվեարկության արդյունքներով՝ Կողմ 30, դեմ-0, ձեռնպահ-0, հաստատել Երկրաֆիզիկայի, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնների միավորումը՝ անվանելով Երկրաֆիզիկայի, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոն:

2. ԼՄԵՑԻՆ. Փոխդեկան Ս.Ս.Քելյանի հաղոդքումը **2021/2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների լուծարքային շրջանի արդյունքների** վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց լուծարքային շրջան տեղափոխված ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների, արդյունքում 113 ուսանող չեն հաղթահարել լուծարքային շրջանը (30 ուսանող՝ Աշխարհագրություն, 45 ուսանող՝ Քարտեզագրություն և կադաստրային գործ, 21 ուսանող՝ երկրաբանություն և 17 ուսանող՝ Սերվիս մասնագիտությունների գծով):

-Անկախ այն հանգամանքից, որ քննություններին անպատրաստ ներկայացած ուսանողների թիվը բավականին մեծ է, այնուամենայնիվ լուծարքային շրջանին չմասնակցած ուսանողների մեծամասնությունն ուսման վարձը չվճարած ուսանողներն են,-ասաց Ս.Քելյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց.Պ.Գ.Դավթյանը ցավով նշեց, որ ուսանողի անտարբերությունը ուսման նկատմամբ բերում է կրթական մակարդակի անկման: Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ նշված անտարբերությունը սոցիալական հիմքեր ունի: Վարդանյանն առաջարկեց աշխատել կուրսի պարտաճանաչ և

մասնագիտությամբ հետաքրքրվող ուսանողների հետ՝ աստիճանաբար ներգրավելով բոլորին: Պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը հավաստիացրեց, որ մասնագիտությանը տիրապետող ուսանողի համար աշխատատեղի խնդիր չկա, քանի որ հանրապետությունում բարձրակարգ մասնագետների պահանջարկն ակնառու է: Դոց.Ս.Սուվարյանն իր ելույթում անդրադարձավ ամբիոնների միավորման հարցին և առաջարկեց օբյեկտիվ գնահատել ֆակուլտետում սովորող և անտարբեր ուսանողների հարաբերակցությունը: - Ուսանողը պետք է գիտակցի, որ ԲՈՒՀ ընդունվելն իր մասնագիտական կայացման սկիզբն է: Իսկ մենք պետք է ընդունենք և հիշենք որ կրթությունը ծառայություն է: Պետք է սահմանել տարբեր չափանիշներ և հասկանանալ թե, որ ուսանողից գիտելիքի ինչ մակարդակ ակնկալել,- ասաց դոց.Ս.Սուվարյանը: Ուսանող Լ.Հունանյանն առաջարկեց առավել մեծ խստություն ցուցաբերել ուսուսման որակը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև ընդլայնել դպրոցներում մասնագիտությունների իրազեկման մակարդակը: Ուսանող Լ.Սուրադյանն իր խոսքում առանձնացրեց առկա շփման առավելությունները՝ օրինակ բերելով 2020-2021 ուս.տարվա եքսպո առցանց ցուցահանդեսը: Դոց.Շ.Խաչատրյանը հերքեց սոցիալական հիմքով պայմանավորված ուսանողների չսովորելու փաստը և նույնպես առաջարկեց աշխատել կուրսի սովորող ուսանողների հետ՝ օրինակ բերելով արտասահմանում դասավանդման փորձը: Ուսանող Ֆ.Ախոյանը նշեց, որ աշխատում է մասնագիտությամբ՝ ամրապնդելով պրակտիկայում ունեցած բացթողումները: Դեկան Մ.Գրիգորյանը ելույթի ժամանակ ներկայացրեց ուսուցման ընթացքում հանդիպող ծայրահեղությունները: - Կրթական համակարգը խեղաթյուրվել է աշխարհով մեկ, մենք պետք է մեր փորձից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային փորձը, մշակենք մի համակարգ, որը կլուծի մեր առջև ծագած խնդիրները,-ասաց Մ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Փոխդեկան Ս.Քելյանի հաղորդումը ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի ներդրման նպատակահարմարության ու արդյունավետության հարցը: Նա ներկայացրեց ամբիոնի վարիչների կողմից ներկայացված կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց.դոց.Ս.Ռ.Սուվարյանը, Պ.Գ.Դավթյանը, Վ.Վ.Գրիգորյանը, Ա.Թ.Գրիգորյանը, Մ.Ս.Մկրտչյանը, Շ.Վ.Խաչատրյանը, պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը: Նրանք նշեցին, որ 2020-2021 ուստարում ԵՊՀ-ում կուրսային աշխատանքների կատարումը փոխարինվեց բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում մասնագիտական որոշ դասընթացներում հետազոտական տարրի աշխատանքի կատարմամբ: Ենթադրվում էր, որ այն կմեծացնի ուսանողի կողմից կատարվող աշխատանքի ինքնուրույնության ծավալը և կլինի ավելի արդյունավետ՝ որակյալ մասնագետներ պատրաստելու հարցում: Սակայն անցած երկու տարիների փորձը ցույց տվեց, որ հետազոտական բաղադրիչի ներդրումը, կուրսային աշխատանքի կատարման համեմատ, ունի լուրջ բացթողումներ և թերություններ: Կուրսային աշխատանքն ինքնուրույն, անհատական հետազոտական աշխատանք էր, որն ուսանողին էր տրվում ամբիոնի կողմից հաստատված որոշակի թեմայով և որոշակի ուղղվածությամբ: Թեմայի վերնագիրն ու կատարման ընթացքը հասանելի էին ամբիոնի բոլոր դասախոսներին և նրանք կարող էին ցանկացած հարցով աջակցել՝ ուսանողին տրամադրելով տարբեր նյութեր և խորհրդատվություն: Հետազոտական աշխատանքի կատարման դեպքում ամբողջ կուրսն աշխատում է միայն դասընթացը վարող դասախոսի ղեկավարությամբ («ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրոսական կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգ» կետ 6), և «Դասընթացի շրջանակում կատարված հետազոտական աշխատանքի արդյունքը հաշվի է առնվում տվյալ դասընթացի արդյունարար գնահատականում որպես երկու ընթացիկ քննություններից մեկի գնահատական...» («ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրոսական կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգ» կետ 9), ինչը ենթադրում է, որ ուսանողը երկրորդ ընթացիկ քննության

Ժամանակ ներկայացնում է միայն մեկ թեմա՝ իր հետազոտական աշխատանքը, մեկ դասախոսի, ինչն արդեն բավականին մեծ ռիսկեր է պարունակում: Հետազոտական աշխատանքի համար որոշ դասընթացներին մեկ կիսամյակում տրվում է 15 ժամ: Սա նշանակում է, օրինակ 30 ժամ դասախոսություն ունեցող դասընթացի ժամաքանակին հատկացվում է 15 ժամ, ինչը ենթադրում է, որ դասընթացավարը, օրինակ 20 հոգանոց կուրսում պետք է յուրաքանչյուր խմբի հետ (խմբում 2-3 ուսանող) ողջ կիսամյակի ընթացքում աշխատի 2 ժամ և կիսամյակի ավարտին էլ գրի հաշվետվություն՝ կատարված աշխատանքի վերաբերյալ: Նշված ժամանակահատվածում ի՞նչ «հետազոտության» մասին կարող է խոսք լինել: Ուսանողը կուրսային աշխատանքի պաշտպանության ժամանակ աշխատանքի կատարման արդյունքները ներկայացնում էր ամբիոնի հանձանաժողովի առջև և գնահատվում: Կուրսային աշխատանքի կատարումն ու պաշտպանության գաղափարն արդեն իսկ ուսանողին տրամադրում էր առավել մասնագիտական մոտեցում ցուցաբերել և ներկայացնել ուսումնասիրությունների արդյունքները, ինչը ուսանողի համար նախապատրաստական փորձ էր ավարտական աշխատանք կամ մասնագիտական թեզը կատարելուց առաջ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Ելնելով վերը շարադրվածից՝ նշվեց, որ հետազոտական աշխատանքի ներդրումն արդյունավետ չէ և առաջարկվեց քննարկել այն ԵՊՀ գիտական խորհրդում՝ դրա ընտրության հարցը թողնելով ֆալուլտետի գիտական խորհրդի որոշմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոնի վարիչների կողմից ներկայացված կարծիքն ընդունել հիմք և ներկայացնել այն ռեկտորատ քննարկման հարց դարձնելու ինչպես նաև Հետազոտական բաղադրիչի կամ կուրսային աշխատանքի ընտրության իրավունքը թողնել ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմանը:

4. ԼՄԵՑԻՆ. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ: (Հաշվետվությունը կցվում է):

ԵԼՈՒՅԹ ՈՆԵՑԱՆ. պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը, դոց.Ս.Ա.Գրիգորյանը նշեցին, որ Վ.Վ.Գրիգորյանն ունի գիտական մեծ ներուժ, աշխատասեր է և նվիրված է իր գործին ու գիտությանը: Նրանք բարձր գնահատեցին ամբիոնում կատարված աշխատանքը և առաջարկեցին ընդունել այն և գնահատել բավարար

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի հաշվետվությունը և ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել բավարար:

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

5.1 ԼՄԵՑԻՆ. Մեթոդ խորհրդի նախագահ Պ.Գ.Դավթյանի հաղորդումը Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի դոցենտ Ա.Հ.Աղիյանի և ասիստենտ Տ.Գ.Մկրտչյանի «Ընդհանուր երկրաբանություն» դաշտային պրակտիկայի ուսումնամեթոդական ձեռնարկը սպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. պրոֆ. Ս.Հ.Հայրոյանը նշեց, որ ներկայացված ձեռնարկը գրագետ շարադրված աշխատանք է, որն անհրաժեշտ է պրակտիկային մասնակցող ուսանողներին: Ներկայացված ձեռնարկը խիստ կարևոր աշխատանք է, որտեղ մանրամաստրեն ներկայացված է բոլոր երթուղիների ընթացքում ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքը: Դոց.Շ.Խաչատրյանը նշեց, որ աշխատանքը եզակի է, քանի որ նման բնույթի աշխատանքներ նախկինում չեն իրականացվել, աշխատանքում առկա է նաև դաշտային աշխատանքների կատարման ընթացքը: Աշխատանքը ներկայացված է կտրվածքներով, ստորերկրյա ջրերի մակարդակի ցուցանիշների նշումներով: Պրոֆ.Վ.Վ.Վարդանյանը և դոց.Ռ.Ս.Մովսեսյանը նշեցին, որ ներկայացված ձեռնարկը օրինակելի աշխատանք է, որը կարող է այլ աշխատանքների համար չափանիշ հանդիսանալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի դոցենտ Ա.Հ.Ադինյանի և ասիստենտ Տ.Գ.Մկրտչյանի «Ընդհանուր երկրաբանություն» դաշտային պրակտիկայի ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան